

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՅԱՎԱԿՅԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐԸ ՆՈՐԻՆ ՍՐԲԱԶՆՈՒԹՅՈՒՆ ՄԻՏՐՈՊՈԼԻՏ ՊԻՄԵՆԻՆ՝ ԲՈՒԼՂԱՐԻԱՅԻ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ Տ. ԿԻՐԻԼ ՊԱՏՐԻԱՐՔԻ ՄԱՀՎԱՆ ԱՌԹԻՎ

Սոֆիա

Այսօր ինը մարտին ստացանք Ձեր տխուր հեռագիրը:

Խոր վշտով համակված եղբայրաբար կմասնակցինք ձեր եկեղեցվո սուգին և Ձեր կողքին կաղոթենք առ բարին Աստված որ հավիտենական լույսի և խաղաղության մեջ պայծառացյալ պահե հոգին հանգուցյալ Կիրիլ Սրբազան Պատրիարքին, որ իր ամբողջ կյանքով ու գործունեությամբ հանդիսացավ մեծանուն հովվապետ մը, վաստակավոր գիտնական մը, խաղաղության կորովի պաշտպան մը և անմոռանալի բարեկամ մը հայ եկեղեցիին և հայ ժողովուրդին:

Թող Տերը օրհնյալ պահե անոր սուրբ հիշատակը երկնքի մեջ ինչպես և երկրի վրա:

Լիազորած ենք Ռումանիո և Բուլղարիո առաջնորդ Տիրայր եպիսկոպոսին որ անձամբ Մեզ ներկայացնե թաղման տխուր արարողության:

Թող հավետ անսասան և միշտ ծաղկյալ մնա բուլղար օրթոդոքս մեր քույր եկեղեցին և իր հավատացյալ ժողովուրդը:

ՎԱԶԳԵՆ Ա
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

9-ը մարտի 1971 թ.,
Ս. Էջմիածին